2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***15000000 (տասնհինգ միլիոն) ՀՀ Դրամ:***

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում :

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչությունը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Երևանի քաղաքապետարան	Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային
ք. Երևան, Արգիշտի փ. 1	ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
Կենտրոնական գանձապետարան	Ք. Երևան, Թումանյան 54
ՀՀ 900012411147	ՀՀ ֆինանսների նախարարության
ՀՎՀՀ 02593108	գանձապետարան
	h/h 900018001306
	ՀՎՀՀ 02510673
Ի. Օսիպյան _____	Կ. Դուրգարյան_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

« 07 » դեկտեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/220
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	Ընդհանուր գինը	Ընդհանուր քանակը	Մատուցման	
							Հասցեն	Ժամկետը
1.	79951100/81	Դպրոցների և մանկապարտեզների տնօրենների միջոցառումներ	Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող դպրոցների և մանկապարտեզների տնօրենների, ինչպես նաև մանկավարժական անձնակազմի խրախուսմանը միտված մշակութային միջոցառման շրջանակում 2022թ. դեկտեմբերի 17-ին ժամը 19:00-ին «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի դահլիճում՝ 1050 նստատեղերով կամ համարժեք նստատեղերով և դահլիճի տեխնիկական հագեցվածության այլ թատերական դահլիճում անհրաժեշտ է ապահովել Յու.Գրիգորովիչի բեմադրությամբ Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետային ներկայացման (լիբրետոն՝ Յու.Գրիգորովիչի՝ ըստ Ռ.Ջովանլոյիի «Սպարտակ» վեպի և հին աշխարհի պատմության սյուժեների) ցուցադրությունը՝ հետևյալ նկարագրությամբ. «Մ.թ.ա. 73-71 թվականներին փախստական ստրուկների ոչ մեծ խումբը, որ սկզբում կազմված էր մոտավորապես 78 փախստական գլադիատորներից, վերաճել է ավելի քան 120 հազարանոց համայնքի՝ կազմված տղամարդկանցից, կանանցից ու երեխաներից, որոնք հարաբերականորեն անպատիժ կերպով տեղաշարժվում էին Իտալիայում մի քանի առաջնորդների գլխավորությամբ, որոնց թվում էր հայտնի գլադիատոր Սպարտակը: Այդ խմբի՝ կռվելու ունակ տղամարդիկ կազմել են զարմանալիորեն արդյունավետ ռազմական ջոկատ, որը բազմիցս ցույց է տվել, որ կարող է դիմադրել հռոմեական ռազմական ուժերին՝ ինչպես տեղական պարեկախմբերին ու աշխարհազորայիններին, այնպես էլ կոնսուլի հրամանատարության տակ գործող հռոմեական լեգեոններին: Սպարտակի բանակի ռազմական հաջողությունների շարունակման պատճառով հռոմեական սենատի աճող անհանգստությունը, ինչպես նաև հռոմեական քաղաքներում ու գյուղական վայրերում կատարվող թալանները վերջնական արդյունքում հանգեցրել են նրան, որ հանրապետությունում գործի է դրվել ութ լեգեոններից	դրամ	5000000	1	ՀՀ ք. Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ. դեկտեմբերի 22-ը

			կազմված բանակը Մարկոս Կրասոսի դաժան, բայց արդյունավետ ղեկավարությամբ: Պատերազմն ավարտվել է մ.թ.ա. 71 թվականին, երբ Սպարտակի բանակը, երկարատև ու արյունահեղ մարտերից հետո նահանջելով Կրասոսի, Պոմպեոսի ու Լուկուլլոսի լեգեոնների ճնշման ներքո, ամբողջովին ոչնչացվել է՝ միաժամանակ ցույց տալով կատաղի դիմադրություն»: Ներկայացումը պետք է լինի 134 րոպե տևողությամբ, համապատասխան լուսային և հնչյունային տեխնիկայի առկայությամբ, և դրանք սպասարկող անձնակազմի ապահովմամբ: Բեմականացումը պետք է ներկայացվի 3 գործողությամբ 82 (ութսուներկու) բալետի արտիստների կողմից, ապահովված լինի ներկայացման ցուցադրության 130 (մեկ հարյուր երեսուն) օժանդակ-սպասարկող և ստեղծագործական կազմով և ստեղծագործական մտահղացման իրականացման անհրաժեշտ դեկորացիաներով և ռեկվիզիտներով: Դահլիճում պետք է ապահովված լինի համապատասխան (սենյակային) ջերմաստիճանն ու օդափոխությունը:					
2	79951100/79	Դպրոցների և մանկապարտեզների տնօրենների միջոցառումներ	Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող դպրոցների և մանկապարտեզների տնօրենների, ինչպես նաև մանկավարժական անձնակազմի խրախուսմանը միտված մշակութային միջոցառման շրջանակում 2022թ. դեկտեմբերի 19-ին ժամը 19:00-ին «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի դահլիճում՝ 1050 նստատեղերով կամ համարժեք նստատեղերով և դահլիճի տեխնիկական հագեցվածության այլ թատերական դահլիճում անհրաժեշտ է ապահովել Գ.Գրիգորյանի բեմադրությամբ Ա. Տիգրանյանի «Անուշ» բալետային ներկայացման (ըստ Հ.Թումանյանի «Անուշ» պոեմի) ցուցադրությունը՝ 3 գործողությամբ: ««Անուշ»-ի նյութը վերցված է իրական կյանքից. պոեմում հիմնական առանցքային նյութն Անուշի և հովիվ Սարոյի փոխադարձ նվիրական սերն է: Բայց սիրահար զույգի երջանկությունն անակնկալ խափանվում է հարսանիքի ժամանակ, երբ Սարոն, Անուշի եղբոր՝ Մոսիի հետ կոխի բռնված, խախտում է «հնոց ադաթը» և տապալում է ընկերոջը: Այդ ադաթի խախտմանը հետևում է իգիթ ընկերների «անհաշտ թշնամությունը»: Ողջ գյուղի առաջ ամոթահար եղած, խորապես վիրավորված Մոսին հետապնդում ու վրեժ է լուծում Սարոյից՝ սպանելով նրան: Իսկ Անուշը, որի «չար բախտը», ժողովրդի հավատալիքների համաձայն, կանխորոշված էր արդեն «համբարձման տոնի» վիճակահանությամբ, արտաքսվում է հոր տնից և խելագարվում տանջանքներից ու վշտից»: Ներկայացումը պետք է լինի 134 րոպե տևողությամբ, համապատասխան լուսային և հնչյունային տեխնիկայի առկայությամբ, և դրանք սպասարկող անձնակազմի ապահովմամբ: Բեմականացումը պետք է ներկայացվի 91 (ինսունմեկ) արտիստների կողմից, ապահովված լինի ներկայացման ցուցադրության 130 (մեկ հարյուր երեսուն) օժանդակ-սպասարկող և ստեղծագործական կազմով և ստեղծագործական մտահղացման իրականացման անհրաժեշտ դեկորացիաներով և ռեկվիզիտներով:	դրամ	5000000	1	ՀՀ ք. Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ. դեկտեմբերի 22-ը

			Դահլիճում պետք է ապահովված լինի համապատասխան (սենյակային) ջերմաստիճանն ու օդափոխությունը:					
3	79951100/80	Դպրոցների և մանկապարտեզների տնօրենների միջոցառումներ	Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող դպրոցների և մանկապարտեզների տնօրենների, ինչպես նաև մանկավարժական անձնակազմի ու աշակերտական խորհրդի խրախուսմանը միտված մշակութային միջոցառման շրջանակում 2022թ. դեկտեմբերի 21-ին ժամը 13:00-ին «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի դահլիճում՝ 1050 նստատեղերով կամ համարժեք նստատեղերով և դահլիճի տեխնիկական հագեցվածության այլ թատերական դահլիճում անհրաժեշտ է ապահովել Գ.Կովտունի բեմադրությամբ Պ.Չայկովսկու «Մարդուկ-Ջարդուկ» բալետային ներկայացման (լիբրետոն՝ Մ.Պետիպայի ըստ Էռնեստ Թեոդոր Ամադեյ Գոֆմանի «Մարդուկ-Ջարդուկը և մկների թագավորը» հեքիաթի) ցուցադրությունը՝ հետևյալ նկարագրությամբ. «Սուրբ Ծննդյան տոնի նախօրեին բժշկական խորհրդատու Շտալբաումի տանը հավաքվում են համաքաղաքավիները տոնը նշելու: Տոնին հատկապես անհամբեր սպասում էին երեխաները՝ Մարին և Ֆրանցը և մտածում, թե այս անգամ ինչ նվել է նրանց տալու իրենց հնարամիտ կնքահայրը՝ դատարանի ավագ խորհրդական Դրոսելմեյերը:Երեկոյան երեխաները տոնածառի մոտ, որի վրա և շուրջը կային նվերներ: Նվերների մեջ Մարիին դուր եկավ Մարդուկ-Ջարդուկը, արտաքնապես անճոռնի տիկնիկը Մարիին շատ դուր եկավ: Գիշերը երեխաները խաղալիքները տեղավորեցին ապակե պահարանում: Մարդուկ-Ջարդուկը տեղավորելիս Մարին ականետես եղավ մկների յոթ գլխանի թագավորի և տիկնիկների բանակի միջև կռվին, որին առաջնորդում էր Մարդուկ-Ջարդուկը: Տիկնիկները հանձնվում էին մկների ճնշման ներքո, և երբ մկների թագավորն արդեն հասնում էր Մարդուկ-Ջարդուկին վերջինս հավաքելով իր վերջին ուժերը հաղթում է նրանց: Մարին նետվում է դեպի իր փրկիչը և օգնում ոտքի կանգնել և անսպասելիորեն Մարդուկ-Ջարդուկը վերածվում է գեղեցիկ արքայազնի: Դոսելմեյերը հեքիաթային փաթիլներ շաղ տալով նրանց ուղեկցում է քաղցրավենիքի հրաշալի աշխարհը: Նրանց դիմավորում են մոլորակի տիրուհին և Դոսելմեյերը և խնջույք կազմակերպում: Օրվա վերջում արքայազնը Մարիին սեր է խոստովանում, Մարին երջանիկ է: Ներկայացումը պետք է լինի 98 րոպե տևողությամբ, համապատասխան լուսային և հնչյունային տեխնիկայի առկայությամբ, և դրանք սպասարկող անձնակազմի ապահովմամբ: Բեմականացումը պետք է ներկայացվի 68 (վաթսունութ) բալետի արտիստների կողմից, ապահովված լինի ներկայացման ցուցադրության 130 (մեկ հարյուր երեսուն) օժանդակ-սպասարկող և ստեղծագործական կազմով և ստեղծագործական մտահղացման իրականացման անհրաժեշտ դեկորացիաներով և ռեկվիզիտներով:	դրամ	5000000	1	<< ք. Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ. դեկտեմբերի 22-ը

			Դահլիճում պետք է ապահովված լինի համապատասխան (սենյակային) ջերմաստիճանն ու օդափոխությունը:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012411147
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
Ք. Երևան, Թումանյան 54
ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարան
Հ/Հ 900018001306
ՀՎՀՀ 02510673

Կ. Դուրգարյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«07» դեկտեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/220
ծածկագրով գնման պայմանագ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման /CPV/	Անվանումը	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951100/81	«Դպրոցների և մանկապարտեզների տնօրենների միջոցառումներ/խրախուսումներ» (միջոցառումների հետ կապված ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	5000000	5000000
2	79951100/79	«Դպրոցների և մանկապարտեզների տնօրենների միջոցառումներ/խրախուսումներ» (միջոցառումների հետ կապված ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	5000000	5000000
3	79951100/80	«Դպրոցների և մանկապարտեզների տնօրենների միջոցառումներ/խրախուսումներ» (միջոցառումների հետ կապված ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	5000000	5000000
		Ընդամենը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	15000000	15000000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012411147
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
Ք. Երևան, Թումանյան 54
ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարան
Հ/Հ 900018001306
ՀՎՀՀ 02510673

Կ. Դուրգարյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3

« » դեկտեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/220
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » դեկտեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/220
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն